

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

<b>ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>	Մետաղական կոնստրուկցիաների/մեխանիկական սարքավորումների որակի ապահովման և վերահսկման համակարգող
<b>ՎԵՐԱԴԱՍԻ ՊԱՇՏՈՆԸ</b>	Մետաղական կոնստրուկցիաների/մեխանիկական սարքավորումների որակի ապահովման և վերահսկման պատասխանատու
<b>ԺԱՄԿԵՏԸ</b>	9 ամիս
<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԸ</b>	Ամուլսար, Վայոց ձոր
<b>ԱՍՏԻՃԱՆԸ</b>	

**ՊԱՇՏՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մետաղական կոնստրուկցիաների/մեխանիկական սարքավորումների որակի ապահովման և վերահսկման համակարգողից պահանջվում է բարձր մակարդակի կազմակերպվածություն և բժախնդրություն՝ Ամուլսարի Որակի ապահովման և վերահսկման (ՈԱՎ) խմբի շրջանակներում որակի ստուգման գործընթացը համակարգելու համար: Տվյալ պաշտոնի համար ընտրված թեկնածուն պարտավոր է արդյունավետ կերպով աշխատել թիմում և համակարգել հանքի շինարարության ծրագրում որակի ապահովմանն ուղղված գործողությունները զրոյական մակարդակից: Բացի այդ, տվյալ մասնագետը պարտավոր է վերահսկել և ապահովել փաստաթղթերի ժամանակին և ճշգրիտ ներկայացումը կապալառուների և Ծրագրում ընգրկված անկախ փորձարկող ընկերությունների կողմից: Տվյալ պաշտոնում հաջողությամբ աշխատելու համար անհրաժեշտ է նաև ունենալ շփվելու և հաղորդակցվելու հմտություններ:

- Դրսևորել նախաձեռնողականություն և համագործակցել Որակի ապահովման այլ բաժինների, Ծրագրի ղեկավարության, Պայմանագրերի կառավարման և Գնումների բաժինների հետ սահմանված նպատակներն ու առաջադրանքները կատարելու նպատակով
- Համակարգել հանգույցում տեղադրվելիք մետաղական կոնստրուկցիաների, մեխանիկական և արտադրական սարքավորումների որակի վերահսկումը
- Մասնակցել բոլոր տեղադրվող սարքավորումների համար մշակված Որակի ապահովման փաստաթղթերի կազմակերպմանն ու ստուգման գործընթացներին:
- Աշխատել կապալառուների հետ տեղամասում՝ ապահովելով, որ Ստուգման և Փորձարկման պլաններով նախատեսված բոլոր ընթացիկ և ավարտական ստուգումներն իրականացվեն նախքան լրացուցիչ շինարարական աշխատանքներին անցնելը
- Տեղեկատվություն հավաքել շինարարության որակի հետ կապված ցանկացած մտահոգության դեպքում՝ խնդիրները բացահայտելու և դրանց հնարավոր լավագույն լուծումներ տալու նպատակով

Տվյալ պաշտոնում հաստատված աշխատակցին ուղղորդում է Մետաղական կոնստրուկցիաների/մեխանիկական սարքավորումների գծով Որակի ապահովման և վերահսկման պատասխանատուն, և նրանից անկալվում է որոշակի աջակցություն ՈԱՎ ողջ անձնակազմի համար: Պարտականությունները պետք է իրականացվեն բարձր մակարդակով, արհեստավարժ կերպով և բարոյական չափանիշների համաձայն՝ ապահովելով Ծրագրի ճշգրիտ իրականացումը անվտանգության, ծախսերի և ժամանակացույցի առումով:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- Ուսուցանել Ծրագրի թիմին և Ծրագրի որակի կառավարման բարելավման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել
- Իրականացնել շինարարական աշխատանքների շարունակական մոնիթորինգ՝ մասնագրերից շեղումները բացահայտելու և դրանք պատշաճ կերպով վերացնելու նպատակով

- Գրանցել և լուսանկարահանել շինարարական աշխատանքների ընթացքում բացահայտված բոլոր շեղումները մասնագրերից
- Մասնագրերից ցանկացած շեղման վերաբերյալ գեկուցել Մետաղական կոնստրուկցիաների/մեխանիկական սարքավորումների գծով ՈԱՎ պատասխանատուին
- Հետևել, որ բացահայտված թերությունները վերացվեն սահմանված ժամկետներում
- Մասնակցել կապալառուների հետ հանդիպումներին, քննարկել աշխատանքների ընթացքում բացահայտված որակի հետ կապված խնդիրները
- Համակարգել գործողությունները մոնիտինգի և շինարարական աշխատանքներով զբաղվող կապալառուների հետ՝ աշխատանքային տեղամասում ՈԱնՎ ապահովելու նպատակով
- Ապահովել, որ ՈԱնՎ հետ կապված բոլոր գործողությունները հասկանալի լինեն և համապատասխան կապալառուի կողմից իրականացվեն Պատվիրատուի չափանիշների համաձայն
- Անկողմնակալ հաղորդակցություն ապահովել տեղամասի մենեջերների և Ծրագրի հովանավորների հետ՝ ուսումնասիրելով շաբաթական կտրվածքով գործնական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները դրանց ամենօրյա թարմացումներով
- Հանգիստ մոտեցում ցուցաբերել մշտապես փոփոխվող թիրախային ցուցանիշների և առաջնահերթ գործողությունների հետ առնչվելիս
- Արագ ընթացող, ոչ ստանդարտ նախագծի շրջանակներում աշխատելու կարողություն ցուցաբերել

#### **ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

- Կրթություն շինարարության, մեխանիկայի և տեխնիկական ոլորտում
- Առնվազն 2-5 տարվա աշխատանքային փորձ ծանր արդյունաբերության և շինարարության ոլորտում
- Հայաստանյան չափանիշների, ԳՈՍՏ-երի և IEC չափանիշների իմացություն և կիրառման փորձ
- Համակարգչով աշխատելու փորձ
- MS Office համակարգի (այդ թվում՝ MS Outlook, Excel և Word ծրագրերի) տիրապետում
- Անգլերենով շփվելու կարողությունը պարտադիր է տվյալ պաշտոնի համար

#### **ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

Հետաքրքրված բոլոր թեկնածուները կարող են իրենց ինքնակենսագրությունն (ռեզյումեն) ուղարկել հետևյալ հասցեով՝ [hr@lydianinternational.co.uk](mailto:hr@lydianinternational.co.uk)՝ Նամակի 'Subject' տողում անհրաժեշտ է նշել պաշտոնը: Միայն վերջին փուլ անցած (կարճ ցուցակում ընդգրկված) թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի

#### **ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ**

13 փետրվարի 2018թ.

#### **ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ**

27 փետրվարի, 2018թ.